

<https://doi.org/10.46991/hc.2024.21.1.063>

The First Stage of Smbat Shah-Aziz's Activities in the Care of Orphans

Hovik Grigoryan

<https://orcid.org/0000-0001-9211-1442>

YSU Faculty of History, Associate Professor at the Chair of Armenian History, PhD

hovgrigoryan@ysu.am

Keywords: Smbat Shahaziz, Patriarch Ormanyan, massacres, Western Armenian orphans, orphan care activity, fundraising, orphanage, Moscow group.

Smbat Shahaziz's national and social activities are little known in society. The fact of the organization of the group supporting the Western Armenian orphans by him has been briefly focused on. Meanwhile, archival documents prove that at the end of the 19th century, when Western Armenians faced all-national tragedy, the poet showed great enthusiasm in terms of supporting his people. This article is the first attempt to study this issue.

The writer's concern about the fate of orphans is evidenced by the presentation of his program at the event organized in Moscow on the occasion of his 35 years of his activities. At the core of it, the writer put the issue of starting a fundraiser among Russian-Armenians and opening orphanages in Asia Minor, urging not to delay this important initiative under any pretext. The documents prove that the questions and approaches in his speech were derived from the content of the letter addressed to him by the Patriarch of Constantinople M. Ormanyan.

The process of formation of the Moscow orphan care structure started at the meeting convened on May 23, 1898. The president and treasurer of the group was S. Shahaziz. The article presents in detail his efforts to organize a fundraiser and open as many orphanages as possible with the collected funds. There were many obstacles in this process and the poet's aspirations were not always met, and he also experienced disappointment.

Today, on the basis of unique documents, a number of details of the remarkable but not always smooth cooperation between S. Shahaziz and M. Ormanyan have been revealed, the various difficulties on the way to establishing orphanages have been highlighted, and the circumstances of the opening of five orphanages in the first stage of S. Shahaziz's orphan care activities have been presented.



Սմբատ Շահազիզի որբախնամ գործունեության առաջին փուլը

Սմբատ Շահազիզի որբախնամ գործունեության առաջին փուլը

Հովիկ Գրիգորյան

ԵՊՀ պատմության ֆակուլտետ, հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

Հիմնաբառեր՝ Սմբատ Շահազիզ, պատրիարք Օրմանյան, կոտորածներ, արևմտահայ որբեր, որբախնամ գործունեություն, դրամահավաք, որբանոց, Մոսկվայի մասնախումբ:

Սմբատ Շահազիզի ազգային-հասարակական գործունեությունը հանրությանը քիչ է հայտնի: Լոկ հայանցիկ արձանագրվել է արևմտահայ որբերին օգնող մասնախմբի կազմակերպման և որբախնամ գործունեության փաստը: Մինչդեռ արխիվային վավերագրերը վկայում են, որ XIX դարի վերջին՝ արևմտահայության համար ողբերգական օրերին, բանաստեղծը գտնվել է իր ժողովրդի կողքին, ապրել նրա հոգսերով և ծավալել որբախնամ եռանդուն գործունեություն: Տպագրության ներկայացված հոդվածն այդ խնդիրն ուսումնասիրելու առաջին փորձն է:

Որբերի ճակատագրի հարցում գրողի մտահոգության մասին վկայում է իր 35-ամյա գործունեության առթիվ Մոսկվայում կազմակերպված հանդիսության ժամանակ նրա ծրագրային ելույթը: Դրա առանցքում գրողը դրել է ռուսահայության շրջանում հանգանակություն սկսելու և Փոքր Ասիայում որբանոցներ բացելու հարցը՝ հորդորելով որևէ պատրվակով չձգձգել ու չմեռցնել բարի գործը: Վավերագրերը վկայում են, որ այդ ելույթում առկա հարցադրումներն ու մոտեցումները բխում էին Կ. Պոլսի պատրիարք Մ. Օրմանյանի՝ նրան հասցեագրած նամակի բովանդակությունից:

Մոսկվայի որբախնամ կառույցի հիմքը դրվել է 1898 թ. մայիսի 23-ին գումարված ժողովում: Մասնախմբի նախագահը և գանձապետը Մ. Շահազիզն էր: Հողվածում հանգամանորեն ներկայացված են դրամահավաք կազմակերպելու և հանգանակված միջոցներով հնարավորինս մեծաթիվ որբանոցներ բացելու ուղղությամբ նրա գործադրած ջանքերը, արձանագրված են այդ հարցում առաջ եկած խոչընդոտները, բանաստեղծի սպասելիքների ոչ միշտ արդարանալը, ինչու չէ, նաև ապրած հուսախաբությունը:

Ցայսօր անտիպ վավերագրերի հենքի վրա բացահայտվում են նաև Մ. Շահազիզ - Մ. Օրմանյան ուշագրավ, բայց ոչ միշտ դյուրին համագործակցության մի շարք մանրամասներ, վերհանվում որբանոցներ հիմնելու ճանապարհին առկա տարաբնույթ դժվարությունները և ներկայացվում Մ. Շահազիզի որբախնամ գործունեության առաջին փուլում հինգ որբանոցների բացման հանգամանքները:

Овик Григорян

Исторический факультет ЕГУ, доцент кафедры истории Армении, к.и.н.

Ключевые слова: Смбат Шах-Азиз, Патриарх Орманян, массовые убийства, западноармянские сироты, деятельность по опеке сирот, сбор средств, сиротский приют, Московская группа.

Национальная и общественная деятельность Смбата Шах-Азиза малоизвестна в обществе. Кратко освещен факт организации им группы поддержки западноармянских сирот. Между тем архивные документы свидетельствуют о том, что в конце XIX века, когда западные армяне столкнулись с общенациональной трагедией, поэт проявил большой энтузиазм в плане поддержки своего народа. Данная статья является первой попыткой изучения данного вопроса.

О беспокойстве писателя судьбой детей-сирот свидетельствует презентация его программы на мероприятии, организованном в Москве по случаю 35-летия его деятельности. В основу ее писатель поставил вопрос о начале сбора средств среди российских армян и открытия сиротских приютов в Малой Азии, призывая ни под каким предлогом не откладывать это важное дело. Документы доказывают, что вопросы и подходы в его выступлении вытекали из содержания письма, адресованного ему Константинопольским Патриархом М. Орманяном.

Процесс формирования московской структуры по опеке сирот начался на собрании, созванном 23 мая 1898 года. Руководителем и казначеем группы был назначен С. Шах-Азиз. В статье подробно представлены его усилия по организации сбора средств и открытию на собранные средства как можно большего числа сиротских приютов. В этом процессе было много препятствий и чаяния поэта не всегда оправдывались, что нередко приводило к разочарованию.

Сегодня на основе уникальных документов раскрыт ряд подробностей знаменательного, но не всегда гладкого сотрудничества С. Шах-Азиза и М. Орманяна, освещены различные обстоятельства и трудности в процессе открытия сиротских приютов. Представлен процесс открытия пяти сиротских приютов на первом этапе деятельности С. Шах-Азиза.

* * *

Ներածություն: Մեր օրերում, երբ Հայոց ցեղասպանության հիմնախնդրին առնչվող տարաբնույթ հարցերի կողքին կարևորվում է նաև հայապահպանության գործին իրենց նպաստը բերած հայ և այլազգի երախտավորների կատարածն արժևորելու հարցը, հարկ է մոռացության ստվերից դուրս բերել այն անհատներին, որոնք, կանգնելով Գ. Ջանշյանի, Յո. Լեփսիուսի և հայությանը քաջածանոթ այլ երախտավորների կողքին, անվարան կարող էին ասել, որ իրենց բաժինմասնակցությունն ենունեցել ազգի բեկորները փրկելու գործում: Նման երախտավորներից մեկը Սմբատ Շահազիզն է:

Ս. Շահազիզը հայ նոր պոեզիայի հիմնադիրներից էր, վաստակաշատ մանկավարժ, հրապարակախոս, ազատագրական պայքարի գաղափարախոս և ազգային-հասարակական գործիչ: Նրա գրական-մանկավարժական գործունեությունը, հրապարակախոսական ու ազատագրական գաղափարները հիմնականում հայտնի են հանրությանը, ինչը չենք կարող ասել

Սմբատ Շահազիզի որբախնամ գործունեության առաջին փուլը

նրա ազգային ու հասարակական գործունեության մասին: Հրապարակի վրա առկա առաջին փուլի գործունեություններում վերջինս, որպես կանոն, ներկայացվել է հպանցիկ՝ շեշտելով «Աբովյան-Նազարյան» ֆոնդի հիմնադրումը կոլեկտիվազմային կերպով արևմտահայ որբերին օգնող «մասնախմբի» կազմակերպման փաստը [Շահազիզ Ե., 1944, էջ 33-40, 43-44; Մանուկյան Ա., 1959, էջ 18; Հովասափյան Հ., 1960, էջ 25-30; Գևորգյան Լ., 2009, էջ 86]: Ավելին, ինչ-ինչ շահախնդրություններից ելնելով, ժամանակինանգամ փորձ է արվել ստվերել Ս. Շահազիզի գործունեության այդ կողմը, պնդելով, որ հայ ժողովրդի համար բախտորոշ 1880-1890-ական թվականներիննա ամենևին չի առաջնորդվել իր իսկ հոչակած «նախ քաղաքացի լինել, և ապա պոետ» հավատամքով [Կուսիկեան Կ., 1912, էջ 199-201]:

Անհերքելի է, որ բանաստեղծի քնարը 1870-1880-ական թվականներին լռել է՝ իր տեղը զիջելով հրապարակախոսի գրչին: 1890-ական թվականներին գրված ութ բանաստեղծությունները (այդ թվում՝ ազատամարտին և հայերի ջարդերին նվիրված «Ձոհերը» և «Օգնեցեք»-ը) այդ հարցում շատ բան չեն փոխում: Այնուհանդերձ, Սմբատ Շահազիզ հայն ու քաղաքացին ազգի համար ծանր ու ողբերգական օրերին գտնվել է նրա կողքին, ապրել նրա հոգսերով, փորձել հնարավորինս ամոքել նրա վերքերը: Այդ մասին վկայում են ինչպես տպագիր որոշ վավերագրեր, այնպես էլ ցայսօր անտիպ և հետազոտողներին տակավին անհայտ արխիվային փաստաթղթերը: Տպագրության ներկայացվող հոդվածն այդ խնդիրը պարզաբանելու առաջին փորձն է:

Ազգային իրադարձությունների հորձանուտում. Մոսկվայի որբախնամ հիմնադրամի ստեղծումը: Բեռլինի վեհաժողովին հաջորդած տասնամյակները հայության համար սպասումների, մաքառումների, բայց նաև հուսախաբությունների և զոհողությունների ժամանակաշրջան էին: Որպես իր ժողովրդի գիտակից և պարտքի զգացում ունեցող զավակ՝ Ս. Շահազիզը ևս ապրեց այդ բոլոր զգացողությունները: Նա էլ տարվեց լավատեսությամբ, ոգևորվեց Էրզրումի 1890 թ. հունիսյան դեպքերով և Գում Գափուի ցույցով: Դրա անմիջական արդյունքը եղան նրա «Ձոհերը» բանաստեղծությունը կիր իսկնախաձեռնությամբ մոսկվաբնակ դրամատեր Հովհաննես Ժամհարյանի տանը կազմակերպված հավաքույթը՝ հայոց ազատամարտի օգտին դրամի ժողովարարության նպատակով [Բերբերեան Ռուբեն, «ՎԷՄ», 1938, N 3, էջ 46-49]:

Սասունի 1894 թ. աղետը, դրան հաջորդած հետագա տարիների հայերի զանգվածային կոտորածներն ի չիք են դարձնում բանաստեղծի լավատեսությունը: Դատապարտելով Հայկական հարցում տերությունների որդեգրած փարիսեցիական վերաբերմունքը՝ Ս. Շահազիզը, սակայն, շատերի նման թևաթափ չի լինում և փորձում է հնարավորինս աջակցել տառապյալ հայրենակիցներին: Պերճ Պոռշյանին 1895 թ. հունվարի 24-ին գրած նրա նամակում կարդում ենք հետևյալ տողերը. «...Սասունը իր անառիկ կատարներով խոնհարուեց բռնութեան առաջ... հետզհետե նորա օրերը սեւացան: Այնուհետե այստեղի (Մոսկվայի -Հ.Գ.) հասարակութեան մտահոգութիւնները դարձան Սասունի կողմը, որովհետեւ ընդհանուր թշուառութիւնը յաղթում է մասնաւորին: Երկու ժողով գումարուեցին նուաստիս նախագահութեամբ, իսկ վերջին երկրորդին հրաւիրեցի մօտ 31 մարդ Հ. Ժամհարեանի տան մէջ, ուր եւ հանգանակուեց մօտ 17 հազար ռուբլի: Ընտրուեց յանձնաժողով դրամները տնօրինելու... Այստեղ սպասում ենք կաթողիկոսին, թէւ ինձ թւում է որ Պետերբուրգը հազիւ թէ համաձայնի: Արդէն կազմուել է յանձնաժողով... փառաւոր

ընդունելության համար» [Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ (այսուհետ՝ ԳԱԹ), Պերճ Պոռշյանի ֆոնդ, վավ. 208]:

Վերը բերված տողերի ասելիքն ընկալելի լինելու համար նշենք, որ Ս. Շահազիզը շատ է կարևորել Մոսկվայի հայ գաղութի կողմից նորոճյալ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի տպավորիչ ընդունելության կազմակերպումը, որպես յուրատեսակ բողոքի ցույց՝ ընդդեմ ռուսական իշխանությունների, որոնք հայության համար այդ ծանր օրերին, շուրջ երեք ամիս վեհափառին թույլ չէին տալիս ՆորՆախիջևանից մեկնել Պետերբուրգ՝ ցարի հետանձամբ խոսելու ազգային կնճռոտ խնդիրների մասին [Շահազիզ Ե., 1944, էջ 44]:

Ավելին, ցուցադրական ելույթներից ու ճառերից մշտապես խուսափող Ս. Շահազիզը հանձն էր առել Մոսկվայի երկաթուղային կայարանում անձամբ դիմավորել կաթողիկոսին և հայ համայնքի անունից նրան ուղղել ողջույնի հետևյալ խոսքերը. «Վեհափառ Տէր, Մոսկուայի Հայոց հասարակութիւնը... ողջունում է Ձեր բարի գալուստը եւ առաքելաշավիղ ուղեւորութիւնը: Մոսկուայի Հայոց հասարակութիւնը խոր քանդակներով կ'ըրոշմէ ա՛յս օրը իւր տարեգրութեան էջերում որպէս մի իրողութիւն, որ պիտի նորոգէ նորա մտաւոր նիրհող ոյժերը եւ աւելի սերտ շաղկապէ սրանց այն հիւանդ հայրենիքի հետ, ուր մարդկային պատիւը ու գործը մեծ վտանգի մէջ են այսօր: Այո՛, այնտեղ, ողջակիզեալ Սասունի փլատակներում այժմ թագաւորում է մի տարորինակ եւ չարագուշակ անդորրութիւն եւ քրիստոնեաների մարմինները անթաղ ընկած որպէս [կեր] գէշ թռչունների եւ չար գազանների: Ապա ուրեմն թող երկնային եւ երկրային գորութիւնները աջողին մեզ այն գործի համար, որով ծանրացած է Ձեր գթառատ սիրտը եւ պատրաստ է ամենայն զոհաբերութեան...» [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին I, վավ. 63]:

Արևմտահայ որբերի ճակատագրի հարցում Ս. Շահազիզի մեծ մտահոգության մասին է վկայում նրա մանկավարժական գործունեության 35-ամյակի առթիվ Մոսկվայի հայ հասարակության և նրա նախկին աշակերտների նախաձեռնությամբ 1898 թ. մարտի 26-ին կազմակերպված հանդիսության ժամանակ նրա ելույթը, որը տպագրվել է գրողի հոբելյանի առթիվ նույն թվականին լույս տեսած ժողովածուում: Այն իր շոշափած խնդիրներով ու ծանրակշիռ հարցադրումներով ավելին էր, քան սովորական ճառը [Երեսունեւհինգ տարի. 1862-1897, 1898, էջ 10, 16-35]:

Շոշափելով հանրային և ազգային կարևորության որոշ խնդիրներ, գրողն իր ճառի առանցքում դնում է այդ օրերին հայությանը մտահոգող արևմտահայերի կոտորածների հարցը. «Թոյլ տուէք ինձ... Ձեզ հետ միասին մի քանի նուիրական արտասունք ցօղենք այն անմունչ գերեզմանների... վերայ, ուր ամփոփուած են եղբայրական բիրաւոր զոհեր, որոնց շուրջը պտտվում են այսօր նոյնաթիւ որբեր, մերկ ու սովամաշ, անհայր ու անմայր, զրկուած մարդկային կարեկցութիւնից... Գնացէք պատմեցէք ձեր հայրենակիցներին, թէ ինչ սև օրեր են եկել մեր գլխին: Խօսեցէք նոցա հետ այնպիսի լեզուով, որ ոչ թէ միայն նոքա, այլև քարերն էլ տեղից ժած գան...» [Երեսունեւհինգ տարի. 1862-1897, 1898, էջ 23]:

Հիշեցնելով հինգերորդ դարի հայերի զոհաբերություններն ու կրած զրկանքները՝ Ս. Շահազիզը հետևյալ պատգամն է հղում իր ժողովրդին. «Քրիստոնեայ Հայեր... վեր կացէք, օգնեցէք ձեր խեղճ եղբայրներին: Ձեզ ենք ասում, ազնիւ քոյրեր, օգնեցէք ձեր որբերին, որ պարտական չմնաք վերջին դատաստանին, որ ձեր խիղճը ձեզ չտանջէ մահից առաջ, որ յետագայ սերունդը չնախատէ ձեզ որպէս գծուծ և փոքրոզի մայրերի: ...Ահա հայ երեխաները ողջ-ողջ գնում են

Սմբատ Շահազիզի որբախնամ գործունեության առաջին փուլը

գերեզման և դուք, հայ մայրեր, դեռ կարողանում էք թանկագին քարերով զարդարուել»[Երեսունեւեփնգ տարի. 1862-1897, 1898, էջ 24]:

Եթե գաղթականների և որբերի վերաբերյալ Ս. Շահազիզի ճառի առաջին մասը զգացմունքային էր, երկրորդը՝ բարոյախոսական, ապա եզրափակիչ հատվածը պարունակում էր գործնական առաջարկներ: «Մենք մեզ թոյլ ենք տալիս հրաւիրելու մեր հայրենակիցներին, –ասված էր դրանում,– որ նոքա իւրեանց լուսման չխնայեն ձգելու խեղճ որբերի գանձանակը, որոնց թիւը հասնում է այսօր յիսուն հազարի, գուցէ, աւելի ևս: Թիւրքիայի Հայերը արդէն ունեն տասնհինգից աւելի կամ պակաս որբանոցներ, թէև այդ մի աննշան բան է ներկայ դիպուածում: Եւրոպական և Ամերիկական մարդասեր հասարակութիւնները նոյնպէս հաւաքել են հայ որբեր, որոնց հաց ու ջուր են տալիս, այլև ուսում ու կրթութիւն, բայց, հարևանցի նկատենք, որ *այդ կրթութեան բաժակի մէջ այնպիսի հիւթեր էլ կան, որոնք բնականաբար չեն կարող համապատասխանել մեր ազգային ցանկութիւններին*(ընդգծումը մերն է՝ Ն.Գ.): Աւելի անտարբեր ենք մնացել Ռուսաստանի Հայերս. մեզ համար, ասես թէ, որբերի խնդիր չկայ... Այս ընդհանուր անտարբերութեան պատճառը մեր հայրենասիրութեան պակասութիւնն է: Հայրենասիրութիւնը... չպէտք է ունենայ միայն վերացական ուղղութիւն, ինչպէս մեզանում է, այլ նա պիտի աջողուած լինի և նիւթական զոհաբերութիւններով յօգուտ կարօտեալներին, ինչպէս այդ լինում է քաղաքակիրթ ազգերի մէջ: ...մենք դիմում ենք նախ Մոսկուա քաղաքին, ապա և բոլոր Հայոց քաղաքներին յանուն ազգային պատուի ու մարդասիրութեան սկսել հանգանակութիւն իւրեանց մէջ որբանոցներ պահելու Փոքր Ասիայում: Հարկաւոր է շտապել և յետ չձգել գործը, եթէ Հայը չի կամենում, որ իւր անարատ ու անբիծ կոյսերը հրապարակների առարկայ դառնան, ու խմբերով գոհ գնան անառակութեան...»[Երեսունեւեփնգ տարի. 1862-1897, 1898, էջ 25-26]:

Որբերի հետ կապված գրողին հատկապես մտահոգում էր հոգեբանության խնդիրը: «Օտարազգի քարոզիչներից շատերը, – գրում է նա,– որոնք այսօր աղաւնիների երամի պէս շատացել են Փոքր Ասիայում, վառուած քրիստոնէական ոգով, արդարև, օգնում են մերայիններին զուտ մարդասիրական նպատակով, բայց, տարաբախտաբար, նոցա մէջ կան և այնպիսիները, որոնք նենգութեամբ փայփայում են ու համբուրում խեղճերին, որ հաւատից ծոեն և օտարացնեն: Նոքա այդ բոլորը անում են իբր թէ ազատողի պատրուակով, բայց... Միթէ կարող է ազատիչ կոչուելու այն մարդը, որ, ջրում խեղդուողին առաջարկելով փրկութիւն, պահանջում է նրանից այն, որ սուրբ է ու նուիրական նրա համար»[Երեսունեւեփնգ տարի. 1862-1897, 1898, էջ 31]:

Ս. Շահազիզն անդրադառնում է նաև տարածված մի երևույթի, երբ հասարակության որոշակի շերտ, չցանկանալով մասնակցություն ունենալ ազգօգուտ նպատակներով կազմակերպվող ցանկացած հանգանակության, իր վարքագիծն արդարացնում է նրանով, որի սկզբանէ կասկածի տակ է դնում հավաքվող գումարների արդյունավետ գործածության հարցը: Խոսելով նմանների մասին՝ գրողը հայտարարում է. «...Մենք փորձով գիտենք, որ այդպիսի հարցերով հէնց զբաղուած են այն պարոնները, որոնք երբէք չեն մասնակցում հանգանակութեան թերթին և այդ պատճառով *միշտ հազար կասկած կայ նոցա ձեռին միշտ փող չտալու համար*: Այն ինչ ողորմութիւն անողը այդպիսի խիստ հաշիւներ չի բռնում, որովհետև նրա գլխաւոր նպատակը մարդասիրութեան գութն է դէպի թշուառը»: Ընդունելով, որ որբերի համար հանգանակելիք գումարները պահանջում են շրջանկատ վերահսկողութիւն, որպէսզի իրենց նպատակին ծառայեն,

նա նկատում է, որ. «...բարի գործը ձգձգել ու մեռցնել զանազան պատրուակներով անարժան ու անազնի բան է: Մեզ մնում է միայն այդ պարոններին հարցնել, որ եթե դոքա, պէսպէս պատճառներ կցկցելով, մեծերին չօգնեցին, այժմ ինչով պետք է հանգստացնեն իւրեանց խիղճը, որ փոքրներին էլ չօգնեն»[Երեսունեւհինգ տարի. 1862-1897, 1898, էջ26-27]:

Ս. Շահազիզի ելույթի գործնական մասում առկա վերոբերյալ հարցադրումներն ու մոտեցումները ընկնելու էին նրա որբախնամ գործունեության հիմքում: Ըստ որում, նրա ելույթի հատկապես արևմտահայ որբերի վերաբերյալ առաջարկների հատվածը նախքան տպագրվելը որոշակի լրամշակման է ենթարկվել, որովհետև այդ խնդրի վերաբերյալ գրողի որոշ հարցադրումներ ու առաջարկներ բխում էին Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի՝ 1898 թ. ապրիլի 23-ին նրան հասցեագրած նամակի բովանդակությունից: Գաղտնիք չէ, որ հենց Ս. Օրմանյանի՝ Ս. Շահազիզին և Ռուսաստանում ապրող այլ երևելի հայերին հղած նամակներն են վճռական ազդակ դարձել մոսկվահայ գաղութի ծավալած որբախնամ գործունեության համար:

«Թուրքիոյ Ասիական գաւառաց մէջ տեղի ունեցած ցաւալի դէպքերու հետևանօք բազմաթիւ որբերու երեսի վրայ մնացած լինիլը ծանօթ իրողութիւն մ' է,– գրում է պատրիարքն իր նամակում,– մինչև ցարդ երեսուն առաջնորդական վիճակներէ հասած որբոց ցանկերն երեսուն և հինգ հազարէ աւելի որբ և անտէր մանուկներ կը ներկայացնին յականէ յանուանէ, երբ աւելցնինք այն վիճակներն ալ, որոնք չեն կրցած պահանջուած ցանկերն դէռ յուղարկել, որբոց ընդհանուր թիւն աւելի քան յիսուն հազար կ' ենթադրուի» (ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 107):

Նամակում պատրիարքը տեղեկատվություն էր տալիս Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Ադրիանուպոլսում, Կեսարիայում, Գաղատիայում ու Կարինում տեղական միջոցներով և ևս տասներկու այլ վայրերում, գլխավորապես պատրիարքարանի ջանքերով, բացված որբանոցների մասին: Մատնանշելով, որ իրենց տնօրինած միջոցները հազիվ բավարարել են փրկելու ընդամենը մի քանի հարյուր երեխաների, պատրիարքը բարձրացնում է մյուս գավառներում ևս որբանոցներ բացելու խնդիրը, «նոյն իսկ այն տեղերն, ուր օտարներ ալ բացած են և իրենց խնամոց ներքև գտնուող որբոց՝ իրենց ուզած կերպով կրօնական ուղղութիւն տալ չեն վարանէր»[ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 107]:

Շեշտելով աղետի մեծությունն ու վերքերը դարմանելու համար միջոցների անբավարար լինելը՝ պատրիարքը նամակն ավարտում է հետևյալ դիմումով. «Ուստի, կոչումն կրնինք և Ձեզ որ հաճիք յանուն այդ թշուառ որբոց նպաստ հասցնիլ փութալ, և վստահ ենք որ մեր այս հրաւերն խոր արձագանք պիտի գտնէ Ձեր բարեսէր հոգիներու մէջ, և պիտի մատուցանէք մեզ Ձեր ձեռնտուութիւնն որբոց խնամակալութեան գործին մէջ»[ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 107]:

Ս. Շահազիզի մանկավարժական գործունեության 35-ամյակին նվիրված ժողովածուի՝ բանաստեղծ Ս. Ծատուրյանի ձեռքով գրված վերջին ամփոփիչ էջի 1898 թ. մայիսի 20-ով թվագրված լինելովկայում են, որ Ս. Օրմանյանի նամակն մինչ այդ արդեն հասել էր Ս. Շահազիզին ու մյուս հասցեատերերին[Երեսունեւհինգ տարի. 1862-1897, էջ 36]: Գրողի անձնական ֆոնդում պահվող ու անձամբ նրա ձեռքով գրված մի քանի վավերագրեր էլ, որոնք Մոսկվայի հանձնախմբի քառամյա ու հնգամյա գործունեության հաշվետվությունների սևագիր տարբերակներ են՝ գրված 1902 և 1903 թվականներին, թույլ են տալիս հստակ արձանագրել մի քանի փաստեր:

Սմբատ Շահազիզի որբախնամ գործունեության առաջին փուլը

Դրանցում Ս. Շահազիզը ներկայացնում է Մոսկվայի որբախնամ կառույցի ստեղծման հանգամանքները: Անդրադառնալով զանգվածային կոտորածներից հետո քաղաքակիրթ աշխարհում, նաև հայության միջավայրում, հայ որբերին օգնելու նպատակով ծավալված շարժմանը՝ նա գրում է. «Անտարբեր չմնաց Մոսկուայի հայ գաղութն էլ: Սակայն որբերի աշխարհը մեզ անձանոթ լինելով, դժուարացնում էր մեր մարդասիրական պարտքը իրագործելու, մինչև որ Պօլսի պատրիարքից հրաւերներ եկան այստեղ մի քանի պարոնների անունով, որով Սրբազան Հայրը յայտնում էր թէ արդէն կազմուած է «Որբախնամ Յանձնաժողով» իւր նախագահութեամբ և խնդրում է մեր նիւթական աջակցութիւնը նշանակած տեղերում որբանոցներ բանալու»[ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 59ա]:

Պատրիարքի նամակը ստանալուց քիչ անց՝ 1898 թ. մայիսի 23-ին, մեծահարուստ Հովհաննես Ժամհարյանի տանը գումարվում է մի ժողով՝ 15 անձի մասնակցությամբ: Գործը ղեկավարելու համար ընտրվում է մի մասնախումբ: Որոշվում է հանգանակություն կատարել Մոսկվայում և ուր որ հնարավոր է [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 59ա]: Ս. Շահազիզի վկայությամբ մասնախմբի կազմում ընտրվել են Էմմանուել Պոպովյանը, Ստեփան Մամիկոնյանը, Հովհաննես Խրմաճյանն ու ինքը՝ որպէս նախագահ: Ավելի ուշ մասնախումբը հրավիրում է իրեն անդամակցելու նաև Խաչատուր Հովհաննիսյանին [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին III, վավ. 47, վավ. 48]: Գրողի եղբորորդի Երվանդ Շահազիզը, վկայակոչելով հորեղբոր իրեն գրած մեզ անհայտ մի նամակ, նրան անվանում է ոչ միայն մասնախմբի նախագահ, այլև «զանձապետ» և մասնախմբի անդամների ցուցակին հավելում նաև Մովսես Սահարբեկյանի անունը [Շահազիզ Ե., 1944, էջ 34]: Դա ճիշտ է, քանի որ 1898 թ. հուլիսի 29-ին Խ. Հովհաննիսյանին գրած նամակում Ս. Շահազիզը, թվարկելով մասնախմբի անդամներին, տալիս է նաև Ս. Սահարբեկյանի անունը [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 9]:

Մոսկվայի մասնախմբի առաջին քայլերը: Ընտրված մասնախումբը կայացնում է մի քանի որոշումներ, որոնք ընկնում են նրա հետագա գործունեության հիմքում: Արևմտահայ որբերին օգնելու նախընտրելի միջոց է համարվում դրամական հանգանակություն կազմակերպելը՝ Փոքր Ասիայի նահանգներում որբանոցներ բացելու համար: Նախատեսվում է դրանք բացել չորս տարի ժամանակով՝ յուրաքանչյուր որբի համար տարին 50 ռուբլի վճարելով: Հանգանակությունը իրականացվելու էր ոչ միայն Մոսկվայում, այլև ուր հնարավոր էր: Դրան մասնակցելու հրավերներ էին ուղարկելու այն անձանց, որոնց մասնախմբի անդամներն անձամբ ճանաչում էին: Մոսկվայի համար կազմվում են ստորագրողների երկու ցուցակներ՝ մշտական ու միանվագ: Առաջին ցուցակում ընդգրկվում էին նրանք, ովքեր հանձն էին առնում չորս տարի շարունակ յուրաքանչյուր որբի համար վճարել տարեկան 50 ռուբլի: Երկրորդ ցուցակում ընդգրկվում էին միայն միանվագ վճարողները [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 59ա, բաժին III, վավ. 47, վավ. 48]:

Մասնախումբն առանց ժամանակ կորցնելու գործի է անցել: Նրա անդամներն անձնական օրինակով առաջինների թվում էին: Ս. Շահազիզը, Ս. Մամիկոնյանը և Է. Պոպովյանը իրենց վրա են վերցրել երեքական որբերի չորս տարվա ծախսերը հոգալու պարտականությունը, Խրմաճյան եղբայրները՝ երկու, Մովսես Սահարբեկյանը՝ վեց: Նրանց օրինակին հետևել են Մոսկվայի հայ հասարակության այլ ներկայացուցիչներ: Բերենք մի քանի օրինակներ: Տիկին Տիրուհի

Պոպովյանը ստանձնել է 10, Գեորգի Լիանոզյանը՝ 8, Մինաս Շորշորյանը՝ 6, Սարգիս Ջանուսյանը՝ 4, Ջանուսյան մյուս եղբայրները՝ 3, Թումաս Թումանյանը՝ 4, տիկին Աննա Ղարազյուլյանը՝ 4 որբերի ծախսերի հոգսը և այլն:

Ստորագրահավաքից անմասն չեն մնացել նաև մինչ այդ արդեն որբախնամ գործին իրենց մեծ ավանդը բերած Գրիգոր Ջանշյանն ու Ժամհարյան եղբայրները: Նրանցից առաջինը, որի նախաձեռնությամբ 1898 թ. հունվարից 1899 թ. հունիս ընկած ժամանակահատվածում Օսմանյան կայսրության տարբեր վայրերում բացվել են յոթ որբանոցներ, միանվագ տրամադրում է 200 ռուբլի: Իսկ Ժամհարյան եղբայրները, որոնց ծախսերով 1898 թ. մարտին որբանոց էր բացվել Մարաշում, ստանձնում են ևս չորս որբերի խնամքի պարտավորություն:

Արխիվային վավերագրերը վկայում են, որ, ընդհանուր առմամբ, Մոսկվայում անցկացված ստորագրահավաքին մասնակցել են 53 անձ կամ ընտանիք: Նրանցից 40-ը ընդգրկվել են մշտական ստորագրողների ցուցակում և առնվազն չորս տարի իրենց անմիջական մասնակցությունն ունեցել որբախնամ գործին: Միանվագ ստորագրողների ցուցակում առկա են ազգությամբ գերմանացի Ա. Շիլինգի ու նրա տիկնոջ, ինչպես նաև բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրյանի անունները [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին III, վավ. վավ. 29, 30, 31, 32, 36, 47]:

Հրատապ լուծում պահանջող առաջին, զուտ տեխնիկական խնդիրը հանգանակված գումարները Որբախնամ հանձնախմբի նախագահ Մ. Օրմանյանին հասցնելու եղանակի հարցն էր: Մոսկվայի հանձնախմբի ժողովում առաջարկվել էր գումարները պատրիարքին փոխանցել Ռուսաստանի Կ. Պոլսի դեսպանի միջոցով, բայց Մ. Շահազիզը իրավացիորեն կասկածի տակ էր դրել փոխադրման այդ եղանակի ապահով ու երաշխավորված լինելը: Նա ոչ առանց հիմքի վտանգ էր տեսնում, որ տարբեր պատրվակներով գործը կարող է խոչընդոտվել թե՛ ռուսական, թե՛ թուրքական իշխանությունների կողմից, և առաջարկում է հարցի լուծման հետևյալ տարբերակը. «Եթե մասնաւոր մարդիկ կարող են առանց հարցնելու փոխադրել, հասարակութիւնը իրաւունք չունէր այդպէս վարուելու: Արդ այս նուրբ հանգամանքներից խուսափելու համար ապագայում, ես կարծում եմ ուղղակի փոխադրել մեկի անունով պատրիարքին, որով ազատ կ' մնայն և հասարակութիւնը և Մասնախմբի անդամները, իսկ եթէ հարց յարուանուի, այն մէկը կարող է ասել որ ինքն է հաւաքել հասարակութիւնից: Ձեզ (նկատի ունի Խ. Հովհաննիսյանին՝ Չ.Գ.)՝ որպէս ծառայողի, անյարմար է այդ անել, միւսներից եթէ կամենայ մէկը, շատ լաւ, իսկ եթէ չկամենայ, ես ուրախութեամբ յանձն կառնեմ, որովհետև ոչ ծառայող եմ և ոչ վաճառական: Այս բանի մասին խորհրդակցեցեք միւս անդամների հետ...» [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 9]: Նրա առաջարկը հավանության է արժանանում և հետագա տարիներին հենց Մ. Շահազիզի անունով են պատրիարքին փոխանցվում Մոսկվայի հանձնախմբի կողմից հանգանակված բոլոր գումարները:

Առաջին որբանոցների բացումը. դժվարություններ այդ ճանապարհին: Մոսկվայի որբախնամ մասնախմբի ծավալած գործունեության պատկերը հնարավորինս ներկայացնելու գործում առաջին հերթին օգտակար են դրա վերաբերյալ Մ. Շահազիզի՝ 1898-1903 թթ. գրած նամակները, ապա՝ նաև Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանի՝ գերազանցապես Մ. Շահազիզին ուղղված մի քանի տասնյակ նամակները: Դրանք մեծմասամբ ունեն տեղեկատվական բնույթ, իսկ առանձին դեպքերում յուրատեսակ հաշվետվություն են հիշեցնում: Նշված վավերագրերի մեծագույն մասն մինչ օրս հրապարակված չէ և անձանոթ է գիտական հանրությանը: Դրանց մանրագննին ուսումնասիրությունը թույլ է տալիս ոչ միայն լուսաբանել

Սմբատ Շահազիզի որբախնամ գործունեության առաջին փուլը

արևմտահայ որբերի ճակատագրի հարցում երկու գործիչների որդեգրած մոտեցումների որոշակի ընդհանրությունը, այլև բացահայտել այն լուրջ դժվարություններն ու խտրերը, որոնք առկա էին արևմտահայ որբանոցների ստեղծման ճանապարհին և առանձին դեպքերում թուրքմուսուլմանների տեղիք էին տալիս:

Ինչպես երևում է Մ. Օրմանյանի՝ Մ. Շահազիզին 1898 թ. հունիսի 23-ին գրած պատասխան նամակից, արդեն 1898 թ. հունիսի 6-ին Մ. Շահազիզը նրան տեղեկացրել էր ոչ միայն տեղի ունեցած ժողովի, Մոսկվայի հայերի ծախսերով որբանոցներ ստեղծելու վերաբերյալ ընդունված որոշման, այդ նպատակով մասնախմբի ստեղծման, այլև կատարված հանգանակության առաջին արդյունքների մասին՝ հայտնելով, որ այդ պահին արդեն հավաքվել է գումար 75-80 որբերի համար՝ յուրաքանչյուրի տարվա ծախսը 50 ռուբլի հաշվարկով[ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 108, վավ. 109]:

Պատասխան նամակում, տեղյակ պահելով հայաբնակ հիմնական գավառներում ու Կ. Պոլսում արդեն բացված մեկուկես տասնյակ որբանոցների մասին, պատրիարքը մատնանշում է, որ գործընթացից դուրս են մնացել Սեբաստիան, Մալաթիան ու Հիսնիմանսուրը, Կյուրիկը, Ակնը, Բալուն, Բաբերդը, Երզնկան և այլ բնակավայրեր: Նա նպատակահարմար էր համարում Մոսկվայի մասնախմբի հավաքած գումարներով քառասունական երեխաների համար երկու որբանոցներ բացել Սեբաստիայում ու Մալաթիա-Հիսնիմանսուրում, որտեղ համապատասխանաբար կային 1053 ու 1855 որբեր: Պատրիարքի կարծիքով հանգանակվող գումարների աճի կամ այլ տեղերից նոր միջոցների հայթայթման դեպքում որբանոցներում պատսպարվող որբերի թիվը հետագայում աստիճանաբար կարող էր աճել[ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 108, վավ. 109]:

1898 թ. հուլիսի 29-ին Մ. Շահազիզի հանձնարարությամբ Խ. Հովհաննիսյանը Մ. Օրմանյանին է ուղարկվում Սեբաստիայի ու Մալաթիայի որբանոցների առաջին եռամսյակի համար նախատեսված վճարը՝ 2666 ֆրանկ, որը օսմանյան դրամով կազմում էր 116 ոսկե լիրա ու 19 դուրուշ: 1898 թ. օգոստոսի 22-ին նրանց գրած նամակներում պատրիարքը ոչ միայն տեղեկացնում է ուղարկված գումարը ստանալու մասին, այլև հավելում. «Որբանոցներու բացման համար ամսոյս 15-ին ուղղուեցան պետք եղած հրահանգներն՝ թէ՛ Սեբաստիոյ Առաջնորդ Գեր. Տ. Պետրոս Սրբազանին և թէ՛ Մալաթիոյ Առաջնորդական Տեղապահ Տ. Ստեփան քահանայի և Գաւառական վարչութեանց, և երբ բացումը կատարուի՝ պիտի հաղորդուին Ձեզ մանրամասն տեղեկութիւններ»[ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 110, բաժին III, վավ. 71]:

Թվում էր, ամեն ինչ սահուն է ընթանում, և որևէ խանգարող հանգամանք չկա գործի հետագա առաջընթացի համար: Բայց դասուկա առաջին տպավորությունն էր: Գործի նորությունը, արևմտահայ որբերին շուտափույթ օգնելու հարցում Մ. Շահազիզի մոտ նկատվող որոշակի շտապողականությունը, արևմտահայ հոգևորականության, սկզբնական շրջանում նաև Մ. Օրմանյանի անձի հանդեպ վստահության պակասը, Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներում տիրող վիճակին ու բարքերին անձանոթ լինելը ու այլ հանգամանքներ առաջին ամիսներին որոշակի թուրքմուսուլմանների և դժվարությունների տեղիք են տալիս:

Նախ որբախնամ գործի մեջ տակավին անփորձ գրողին հատկապես անձանոթ էին թուրքական ներքին կյանքի տարաբնույթ խոչընդոտները: Նրան թվում էր, թե պատրաստի գումարներ լինելու դեպքում որբանոցների բացման հարցը հնարավոր է լուծել հաշվված օրերի

ընթացքում: Նրա չարդարացված լավատեսությունը էապես տարբերվում էր նման հարցերը խիստ հաշվարկված քայլերով ու զգուշավոր մոտեցումներով լուծող պատրիարքի մտածելակերպից ու գործելակերպից: Մյուս կողմից՝ պատրիարքի հետ կապը պահպանվում էր լոկ նամակագրության միջոցով: Հաղորդակցության միջոցների անկանոնության պատճառով քիչ չէին դեպքերը, երբ պատրիարքի նամակները տեղ էին հասնում ուշացումով՝ անհանգստություն պատճառելով գրողին: Նրա մոտ, գոնե առաջին շրջանում, նկատվում էր ակնհայտ անվստահություն պատրիարքի նկատմամբ: Գործի հապաղումն ու պատրիարքի նամակների ուշացումը Մ. Շահագիզը սկզբում հակված էր բացատրել Մ. Օրմանյանի հաշվետու լինել չցանկանալու մտայնությամբ:

Պատրիարքի՝ Մ. Շահագիզին ուղղված 1898 թ. օգոստոսի 22-ի նամակից ու Մ. Շահագիզի՝ նույն թվականի հուլիսի 22-ին ու 29-ին Խ. Հովհաննիսյանին գրած նամակների բովանդակությունից երևում է, որ վերջինս ի սկզբանե դրել է հանգանակված գումարները խիստ նպատակային տնօրինելու ու հանձնախմբին պարբերաբար հաշվետու լինելու հարցադրումները: Այդ մասին են վկայում հատկապես հուլիսի 22-ին նամակի հետևյալ տողերը. «...Ես կարծում եմ, այժմ եկած լինի Միխայել Էմմանուելովիչը (խոսքը Մ. Է. Պոպովի մասին է, որը 1898 թ. ամռանը եղել է Կ. Պոլսում՝ Հ.Գ.), խնդրում եմ իմացեք. եղել է արդե՞ր պատրիարքի մոտ և ի՞նչ է խոսել մեր հանգանակութեան մասին: Գուցե, մեր առաջարկությունների մեջ եղած լինեն կետեր, որոնց հետ համաձայն չէ պատրիարքը, պետք է պարզել հանգամանքը, որպեսզի գործը առաջ գնայ: Ինչպես երևում է Թիրքիայի մարդերի համար հաշիւ ասած բանը թույլ է աւելորդ կամ վիրավորական, այնինչ ոչ մի հասարակաց գործ չի կարող յաջողուիլ առանց հաշուի: ...Եթե պատրիարքը մինչև անգամ վիրավորուած լիներ որ մենք նրա օրհնութիւնը չենք խնդրել, այլ հաշիւ ենք խնդրել, և այն ժամանակ նա պիտի խոնարհուէր հասարակաց տազնապի առաջին, պետք է նախադասեր որբերի ճիշը և չյետաձգեր մեր կարևոր խնդիրը նոյն որբերի համար»[ԳԱԹ, Սմբատ Շահագիզի ֆոնդ, բաժին II, վավ. 8]:

Գրողը հաշվետու լինելու խնդիրը կարևորում էր ինչպես կասկածամիտներին լռեցնելու, այնպես էլ գործի նկատմամբ հասարակության վստահությունը մեծացնելու և նորանոր միջոցներ հանգանակելու նկատառումներով: Այդ մոտեցմանը Մ. Շահագիզը հավատարիմ մնաց Մոսկվայի որբախնամի գործունեության ողջ ընթացքում: Նրա անտիպ ձեռագրերում ու պատրիարքին գրած նամակներում առկա են բազմաթիվ օրինակներ, երբ նա մինչև վերջին ռուբլին հաշիվ է տալիս, թե ինչ նպատակներով են ծախսվել Մոսկվայի որբախնամի հանգանակած գումարները:

Փորձելով փարատել Մ. Շահագիզի կասկածները, պատրիարքը 1898 թ. օգոստոսի 22-ի նամակում գրում է. «Գաւառական որբանոցները... կը մատակարարուին հոգաբարձութեանց ձեռքով, յուղարկուելով մեր կողմէ սահմանեալ թոշակներն: Հոգաբարձութիւնք կը պարտաւորին ամեն տարեգլուխ հաշուեցոյցն ու ելմտացոյցը ներկայացնել և միանգամայն վեց ամիսն անգամ մը տեղեկագիր մը՝ որբանոցներու բարոյական և ուսումնական վիճակին վրայ: Հարկ չէ ըսել թէ Ձեզ պիտի հաղորդուին այս ամեն հաշուաց և գրութեանց օրինակներն, և մեր կողմէ ևս պարբերաբար ուրիշ կարևոր տեղեկութիւններ՝ որբանոցներու մասին:

Ձեր կողմէ որբանոցներու սահմանեալ նպաստք ամեն երեք ամիսն անգամ մը կրնան մեզ յուղարկուիլ ուղղակի և մենք ևս կը ծանուցանենք Ձեզ նախ ժամանումն և յետոյ՝ եթէ պետք կզգաք, նոյն իսկ յղումն որբանոցներու Հոգաբարձութեանց»[ԳԱԹ, Սմբատ Շահագիզի ֆոնդ, բաժին II, վավ. 110]:

Սմբատ Շահազիզի որբախնամ գործունեության առաջին փուլը

Պատրիարքի նամակը ցույց է տալիս, որ հաշվետվության հարցի հետ կապված նա սկզբունքորեն համամիտ էր Ս. Շահազիզի հետ, և վերջինս մտահոգվելու առիթ չունեւ: Բայց, ինչպես երևում է նրանց հետագա ամիսների նամակագրությունից, այդ հարցը շարունակում էր մնալ օրակարգում: 1899 թ. փետրվարի 6-ի նամակում պատրիարքը նորից անդրադառնում է դրան՝ գրելով հետևյալը. «Ստացանք Ձեր Ազնուութեան անցեալ տարւայ դեկտեմբեր 15 թուականաւ նամակն, որով կը խնդրէիք Սեբաստիոյ և Մալաթիոյ որբանոցներու հաշիւներն յուղարկել՝ ներկայացնելու Ձեր ընդհանուր ժողովոյ ուշադրութեան:

Շատ բանաւոր է և արդար Ձեր այս պահանջը, հաշուետուութեան օգուտներն ամէն տեսակէտով անժխտելի են, և Ձեր Ազնուութիւնն, ինչպէս նաև բոլոր նուիրատու բարեսէրք իրաւունք ունին կատարելապէս, մանրամասն տեղեկութիւն ստանալու իրենց տուած նպաստներու գործածութեան եղանակին վրայ: Բոլոր որբանոցներու Հոգաբարձութիւնք, ընդ որս և Մալաթիոյ և Սեբաստիոյ՝ հրաւիրուած են արդէն ներկայացնելու իրենց հաշիւներն...» [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 115]:

1899 թ. մարտի 6-ին գրած նամակում, տեղյակ պահելով արմավիքի Թորոսյան (Տարասով) մեծահարուստ եղբայրների տրամադրած միջոցներով Ակնում նոր որբանոց բացելու վերաբերյալ իր արդեն տված հրահանգի մասին, պատրիարքը Ս. Շահազիզին նորից հավաստիացնում է. «Կը կրկնենք թէ՛ խնամով և խղճմտութեամբ կը գործադրուին բարերարներու կամքն որբաց պաշտպանութեան գործին մէջ, էն յետին ցանկը կը խնայուի ու միայն նպատակին կը ծառայէ...» [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 117]:

Բայց, ինչպես ցույց կտան հետագա իրադարձությունները, Մ. Օրմանյանի նկատմամբ Ս. Շահազիզի վստահությունը պիտի ձևավորվեր միայն ժամանակի ընթացքում:

Ջանքեր Մոսկվայի որբախնամ հանձնախմբի գործունեության շրջանակներն ընդլայնելու ուղղությամբ: Մտահոգված լինելով արևմտահայ որբերի ճակատագրով՝ Ս. Շահազիզը չի սահմանափակվում վերը նշված երկու որբանոցները հիմնադրելու ուղղությամբ կատարած աշխատանքներով: Օգտագործելով ծանոթների, մտերիմների ունակին աշակերտների միջավայրում ունեցած հեղինակությունը՝ նա քայլեր է ձեռնարկում Մոսկվայում սկսված հանգանակությանը նոր թափ հաղորդելու, հայաբնակ այլ վայրերում ևս միջոցներ հանգանակելու ուղղությամբ: Գրող Պ. Պռոշյանին 1898 թ. նոյեմբերի 6-ին գրած նամակում Ս. Շահազիզն այսպես է ներկայացնում իր համար ստեղծված նոր վիճակը. «... Նորից սկսուած է տնէցտուն շրջելը այն 50 հազար որբերի համար, որ ընկած են Թիւրքիայի նահանգներում: Գործի նախագահը ես եմ և ստիպուած [եմ] մուրացկանութեամբ ժողովել լումաներ» [ԳԱԹ, Պերճ Պռոշյանի ֆոնդ, վավ. 214]:

Ե. Շահազիզի վկայությամբ մոսկվահայ հասարակությունն անգամ ցանկացել է որբերի և այլ գործերով Ս. Շահազիզին գործուղել Կ. Պոլիս և Բաքու, բայց առողջական վիճակի պատճառով նա չի կարողացել հանձն առնել այդ գործը: Փոխարենը 1898 թ. դեկտեմբերի 25-ին նա գրում է իր վերջին բանաստեղծություններից մեկը՝ «Օգնեցեք» խորագրով, որը, տպագրելով նամակների թղթերի վրա, բազմաթիվ օրինակներով տարածում է ժողովրդի մեջ [Շահազիզ Ե., 1944, էջ 43-44]: Դրա պարզ ու անպաճույճ բառերով շարադրված ստորև բերվող տողերը լիովին բացահայտում են այդ օրերին բանաստեղծի ապրած հոգեվիճակը.

«Քո աշըղի պես, չոնգուրը քոքած,
Որբերի խաթեր դոնե-դուռ ընկած,
Հայոց հին երգիչն հին երգ է երգում,
Որ թե սիրում եք Փրկիչն երկնքում,
Առեք Նրա Խաչն և մտեք աշխարհ,
Օգնեցեք որբին, այնքան վշտահար!»:

Նույն օրերին գրողի հոգեվիճակի և մտահոգությունների մասին պատկերացում են տալիս Բաքվում բնակվող իր նախկին աշակերտ Հովհաննես (Իվան) Ալաջայանին 1898 թ. դեկտեմբերի 30-ին գրած նամակի ստորև բերվող տողերը.

«Իմ ազնիւ նախկին աշակերտ Իվան Սիմեոնիչ ...մարդկային ամենամեծ կոչումը պահանջում է այժմ մեզանից գոհաբերություններ: Այո՛, երկինքը անփարատելի թուղպերով սևացել է մեր գլխին և երկիրը, զրկուած կենսական մթերքներից, մահ է սպառնում իւր բնակիչ հայրենակիցներիս, որոնց, ուրեմն, անհրաժեշտ օգնել պիտի: Եթե սորա վերայ աւելացնենք և այն յիսուն հազար փոքրիկ երեխաներին, որոնք դեռևս աջ ու ձախը չեն կարող ջոկել միմիանցից, որոնց ծնողները դիւցազնական մարտիրոսութեամբ կնքել են իրանց կեանքը, հասկանալի կը լինի, թէ այն որբերը որպիսի համակրութեան են արժանի: ... Ես ամենայն համարձակութեամբ դիմում եմ Ձեզ և յանուն մեր բարեկամութեան խնդրում օգնութիւն մեր բազմաթիւ որբերի համար... բոլորին բաւականութիւն տալ մեր ոյժերից վեր է, բայց և ձեռքերը ծալած նայել միայն թշուառութեան վերայ անկարելի է: Թող ով որ կարդայ այս, բերէ իւր մարդասիրութեան վարձը և նուիրէ խեղճերին. ասում ենք թող չյետաձգէ այդ վարձը, որպէս զի ուշ չլինի, որովհետև նա յետոյ կարող է միայն անշնչացած դիակներ թաղել»[ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 4]:

Ս. Շահազիզի այս նամակնունեցել է դրական արձագանք: Նախկին աշակերտը, ընդառաջելով ուսուցչի խնդրանքին, Բաքվի Բալախանիի շրջանում կատարել է միանվագ մի հանգանակություն և 633 ռուբլի՝ 43 անձանց ցուցակի հետ ուղարկել նրան[ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 4]:

Այնուհանդերձ, դիմումների արձագանքները համեստ էին: Գրողը չի էլ թաքցրել հիասթափությունը դրանց հասցեատերերից, հատկապէս մեծահարուստներից: Եղբորորդուն ուղղված նամակներից մեկում նա գրում է. «Գալով որբերի հարցին և նրանց օգնության, պետք է ասենք, որ մենք դեռ շատ հեռու ենք գիտակից միջոցներից: Այնքան հարուստներից մեկն էլ չեղավ, որ մի շոշափելի գոհաբերություն աներ ահագին աղետի առաջն առնելու համար... Ես երկար մտածեցի, թե ինչ տապանագիր պատրաստեմ այս կենդանի մեռածներին կամ մեռած կենդանիներին: Միտս ընկավ ավետարանի հանդիմանությունը, ես էլ այսպէս կազմեցի տապանագիրս.

Ես սրանց էլ մարդ կարծեցի,
Մարդ կոչելով ողջունեցի.
Բայց ափսո՛ս, որ մարգարիտներ
«Շանց ու խոզից» ընծայեցի»[Շահազիզ Ե., 1944, էջ 44]:

Ուշագրավ է, որ որբերի խնդրի վերաբերյալ հայ մեծահարուստներին Ս. Շահազիզի տված գնահատականը էապէս չի տարբերվում այն բնութագրումից, որ գրեթե նույն ժամանակ նույն հարցի վերաբերյալ տվել է ՀՅԴ առաջնորդ Քրիստափոր Միքայելյանն իր «Պատմական չարիք»

Սմբատ Շահազիզի որբախնամ գործունեության առաջին փուլը

հողվածի ստորև բերվող տողերում. «Հազարաւոր նիւթապէս ապահով հայեր Հնդկաստան, Անգլիա, Ամերիկայ, Աֆրիկայ, ջահանամ են գնում... իրենց ունեցածը աւելացնելու համար, բայց և ոչ մէկը չգտնեց, որ այսպիսի մի անսովոր պատմական դժբախտութեան օրերում տեղիցը շարժեր հասարակօգուտ ունէ ձեռնարկի համար...»

Մենք ունենք հազարաւոր հայեր, որոնցից իւրաքանչիւրը կարող էր նոյնքան մարդ կերակրել, նոյնքան որբանոցներ հիմնել, որքան այդ արեց մի քանի ազգերից ժողոված դրամներով, բայց դո՞ւրս եկաւ այդպիսի մէկը: Յայտնի է, որ միակ մի Ջանշեան, ծագումով միայն հայ..., իր անձնական աշխատանքով աւելին արեց հայ մանուկների համար, քան մեր «ազգասէր» հարուստները» [Քրիստափոր Միքայելյան, «Դրօշակ», 1900, N 9, էջ 131]:

Կարծում ենք, եթէ Ք. Միքայելյանն այդ հողվածը գրեր մեկ երկու տարի հետո՝ բուն տեքստը թողնելով նույնը, 1900 թ. մահացած Գրիգոր Ջանշանի անվան կողքին կդներ նաև Ս. Շահազիզի անունը, որի նույնանման գործունեության արդյունքները աստիճանաբար մոտենում էին Գ. Ջանշանի ցուցանիշներին: Մինչդեռ 1900 թ. կեսերին Ս. Շահազիզը դեռևս լուրջ դժվարություններ էր հաղթահարում իր գործունեության ճանապարհին:

Մոսկվայի հանձնախմբի միջոցով որբախնամ գործին մասնակցություն բերեցին Մոզդոկի, Ղզլարի, Արմավիրի, Սիմֆերոպոլի, Կերչի, Նոր Նախիջևանի, Բաքվի, Թիֆլիսի, Շուշիի և հայաբնակ այլ վայրերի տասնյակ ներկայացուցիչներ: Այնուհանդերձ, վավերագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք հիմնականում ներկայացնում էին Հյուսիսային Կովկասի կենտրոնները, հատկապես՝ Արմավիրը: Դրան հակառակ՝ թույլ էին ներկայացված Բաքուն ու Թիֆլիսը, որտեղ կենտրոնացած էին հայ կապիտալի առավել ազդեցիկ ներկայացուցիչները: Որքան էլ գրողի սպասելիքները չէին արդարացել, այնուհանդերձ ստացված նոր միջոցները Մոսկվայի որբախնամին հնարավորություն տվեցին Մալաթիայի և Մեքաստիայի արդեն բացված որբանոցներից բացի հիմնելու նորերը:

Ս. Օրմանյանի՝ Ալեքսանդր, Ղազարոս (Լազար), Գաբրիել (Գավրիլ) ու Միքայել (Միխայիլ) Թորոսյան (Տարասով) եղբայրներին ու Ս. Շահազիզին ուղղված 1898 թ. դեկտեմբերի 15-ի ու 17-ի նամակները վկայում են, որ արձագանքելով գրողի դիմումին՝ արմավիրցի չորս եղբայրները պատրաստակամություն էին հայտնել իրենց միջոցներով արևմտահայ որբերի համար հիմնել որբանոց և հոգալ դրա չորս տարվա ծախսերը՝ գործի հսկողությունը վստահելով Ս. Շահազիզին [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին III, վավ. 70, բաժին II, վավ. 112]:

Ս. Շահազիզին 1899 թ. հունվարի 25-ին հղած նամակում պատրիարքը տեղեկացնում է, որ ստացել է Թորոսյան եղբայրների բացելիք որբանոցի համար ուղարկված 3328 ֆրանկ 90 սանտիմ գումարը [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 114]: Ս. Օրմանյանի մեկ այլ նամակից էլ տեղեկանում ենք, որ 1899 թ. փետրվարի 16-ի նամակով գրողը նրան տեղյակ էր պահել մոսկվահայերի անունով երրորդ որբանոցի բացման վերաբերյալ հանձնախմբի կայացրած որոշման, ինչպես նաև մեկական որբանոցներ բացելու վերաբերյալ Արմավիրի ու Եկատերինոդարի հայերի տված խոստումների մասին [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 116]: Հետագայում ինչ-ինչ պատճառներով Արմավիրից ու Եկատերինոդարից հավաքված միջոցներով բացվեց միայն մեկ որբանոց:

Արմավիրի ու Եկատերինոդարի համեմատ կարող է տարօրինակ թվալ Նոր Նախիջևանի հայերի թույլ արձագանքը Ս. Շահազիզի դիմումներին: Բայց դա ուներ իր բացատրությունը: Նոր Նախիջևանն ուներ առանձին որբախնամ մարմին, որի ջանքերով դեռևս 1897 թ. հոկտեմբերին Եդեսիայի Սուրբ Սարգիս վանքում բացվել էր որբանոց 65 որբերի համար [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին III, վավ. 36]:

Փաստորեն՝ Ս. Շահազիզի գլխավորած Մոսկվայի որբախնամ հանձնախումբը, ընդամենը մի քանի ամսվա ընթացքում (1898 թ. մայիս-1899 թ. փետրվար) կարողացավ միջոցներ ապահովել հինգ որբանոցների համար: Բայց դա ամբողջը չէր: Մի փոքր ուշ Ս. Շահազիզի դիմումին արձագանքեց նաև նրա վաղեմի մտերիմներից մոսկվահայ Հովհաննես Տեր-Հակոբյանը: Վերջինս 1900 թ. ապրիլի 9-ին նամակով դիմել է գրողին և նրա վատեղով նրան՝ գրել հետևյալ տողերը. «Ընդ նամակովս ուղարկելով քեզ 1250 ռուբլի, խնդրում եմ այդ գումարով Տաճկահայաստանում մի որբանոց բանալ, յանուն իմ հանգուցեալ որդու և ձեր նախկին աշակերտ Մկրտչի անուամբ»: Հ. Տեր-Հակոբյանը հանձն էր առնում հոգալ բացվելիք որբանոցի երեք տարվա ծախսերը [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 104]:

Թյուրմբոնումներ Ս. Շահազիզ-Ս. Օրմանյան հարաբերություններում. դրանց հանգուցալուծումը: Դրամահավաքի գործընթացը թեև հետագայում էլ շարունակվում է, բայց Ս. Շահազիզի ուշադրությունն առավելապես կենտրոնանում է հավաքված միջոցներն օր առաջ գործի վերածելու ու որբանոցների բացումը հնարավորինս արագացնելու վրա: Այդ հարցում անհանգստանալու հիմքեր, իրոք, կային: Նրաու պատրիարքի միջև նամակագրությունը 1899 թ. ամռանը լարվածության նոր դրսևորումներ է ունենում: Դա բացատրվում էր օբյեկտիվ ու սուբյեկտիվ որոշակի հանգամանքներով:

Նկատի ունենալով որբանոցներն օր առաջ բացված տեսնելու Մոսկվայի հանձնախմբի տրամադրվածությունը և փորձելով կանխել այդ հարցում առաջանալիք հնարավոր թյուրիմացությունը՝ պատրիարքը Ս. Շահազիզին ուղղված 1899 թ. փետրվարի 27-ի ու մարտի 6-ի նամակներում մատնանշում էր նոր որբանոցների արագ բացման անհնարինությունը՝ գրելով, որ այդ գործը «...չկրնար փափաքուածին չափ արագ կերպով կատարուել տեղական հանգամանաց ու դժուարութեանց պատճառաւ, մանաւանդ, որ մենք նախընտրած ենք արագութիւնը գոհել գործին կանոնաւորութեանն ու ապահովութեանը» [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 116, վավ. 117]:

Դրանհաջորդեց նամակագրական կապի քառամսյա ընդհատում: Այդ նամակներում պատրիարքը լուրի գիտություն էր ընդունում Մոսկվայի հանձնախմբի հաշվին երրորդ որբանոցի բացման վերաբերյալ խնդրանքը և Արմավիրի ու Եկատերինոդարի հայերի միջոցներով որբանոցներ բացելու մասին տեղեկատվությունը և սուսկ տեղյակ պահում Թորոսյան եղբայրների միջոցներով Ակնում որբանոց բացելու վերաբերյալ իր տված հրահանգի մասին: Մինչդեռ Մոսկվայի հանձնախմբի ու Ս. Շահազիզի համար դա բավարար չէր: Բանն այն է, որ մոտենում էր հանձնախմբի գործունեության մեկամսյա ժամկետը: Հանձնախումբը պարտավոր էր ընդգրկուն հաշվետվություն ներկայացնել հավաքված միջոցների նպատակապես օգտագործման մասին, մինչդեռ այդ պահին լուր հակիրճ տեղեկատվություն ուներ Մալաթիայի ու Սեբաստիայի որբանոցների բացման և Ակնի որբանոցի բացման վերաբերյալ տրված հրահանգի մասին: Դրա կողքին բացվելիք երկու նոր որբանոցների առաջին տարվա համար հանգանակված գումարները մնում

Սմբատ Շահազիզի որբախնամ գործունեության առաջին փուլը

էին չօգտագործված: Դա կարող էր կասկածի տակ դնել հանձնախմբի գործունեության արդյունավետության հարցը և խանգարել գործի հետագա ծավալմանը:

Նման պայմաններում է գրվել պատրիարքին ուղղված Ս. Շահազիզի նամակը, որում առկա են դժգոհության, հուսախաբության և հուսահատության որոշակի ելևէջներ: Նամակի սևագիր տարբերակը չունի ամսաթիվ ու տարեթիվ: Բայց բովանդակությունն ու դրան ի պատասխան պատրիարքի 1899 թ. հուլիսի 19-ի նամակը կասկած չեն թողնում, որ այն գրվել է 1899 թ. հուլիսի 7-ին: Գրողի այդ օրերի ապրումները պատկերացնելու համար քաղվածաբար բերենք այդ նամակի հետևյալ հատվածները. «...Դժբախտաբար, մինչև այսօր բախտ չունեցանք հաուստի տեղեկութիւն ստանալ բացուած և որ պիտի բացուէին որբանոցների մասին: Այդ հանգամանքը մեզ համակել է դառն տարակուսանքով ու մտածութեամբ: Մենք թախանձանք խնդրած էինք տեղեկութիւններ հասարակութեանս հաշիւ տալու համար..., որով պիտի ոգևորուէին նուիրատուները... շարունակելու բարի գործը և մեր բազմաթիւ որբերին փրկել կորստեան ճանապարհից: ... Ծանր է մեզ ասել, որ մինչև օրս ոչ մի պատասխան չենք ստացել, այնինչ ամէն օր լսում ենք որ ճգնաժամը թուխպ ամպի պէս կախուած է մեր անտերունչ որբերի գլխին: ...երբ որ նուիրատու անձինք մեզ հարցրին թէ որբերի գործը ի՛նչ դրութեան մէջ է, մենք շուարած և ափիբերան մնացինք անպատասխան: ...շատերը տեսնելով, որ հաւաքած գումարը մնացած է մեծ մասամբ առանց գործադրութեան, հրաժարուեցին երկրորդ տարեշրջանի տուրքից, որով և անբուժելի ցաւ պատճառեցին մեզ և ինձ առանձին որպէս տնօրինողի և պատասխանատու անձի: Խոստովանվում եմ Ձեզ, Սրբազան Հայր, որ ես անգիտանում եմ մի ելք գտնելու այս տխուր և փափուկ գործից: Հրաժարուի՞լ: Բայց այս իմ կողմից կ'լինէր մի բարոյական թուլութիւն: Ի՞նչ անեմ: Չգիտեմ: ...Եթէ այս հանգամանքները չպարզուին գեթ մինչև օգոստոսի վերջը, համարձակ կարելի է հաստատել որ հանգանակութիւնը կիսով չափ կ'խանգարուի. կ'խանգարուի անշուշտ և իմ հասարակութիւնից վայելած վարկը ու պատիւը...» [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 39]:

Ըմբռնելով իրավիճակի լրջությունը՝ պատրիարքը 1899 թ. հուլիսի 19-ին գրած նամակով շտապում է փարատել գրողի կասկածները, պարզաբանել նոր որբանոցներ բացելու հարցում առկա հապաղումների և թյուրիմացությունների պատճառները և տալ հանգամանակից տեղեկատվություն այլ հարցերի վերաբերյալ: Ս. Օրմանյանի նամակի գործնական-տեղեկատվական մասը կարելի է բաժանել երեք մասի:

Նախ հաշվետվություն է տրվում Մոսկվայի մասնախմբի միջոցներով բացված և արդեն գործող երեք որբանոցների հաշվեկշռի մասին՝ 1898 թ. հոկտեմբեր-1899 թ. օգոստոս ժամանակահատվածի վերաբերյալ:

Երկրորդ, հնարավորինս մանրամասն տեղեկատվություն է տրվում արդեն գործող որբանոցների մասին:

Երրորդ, տեղեկատվություն է տրվում մոսկվահայերի հավաքած միջոցներով Խիզանում ու Արմավիրի հայերի հանգանակած գումարներով Հաճնում նոր որբանոցներ բացելու վերաբերյալ կայացված որոշումների և դրանք կյանքի կոչելու հրահանգների մասին:

Անդրադառնանք արդեն գործող որբանոցների մասին տրված տեղեկատվությանը: Ըստ դրա՝ Մալաթիայի որբանոցը բացվել է 1898 թ. նոյեմբերի 23-ին Մալաթիա քաղաքում, ապա՝ նախապատրաստական ծախսերից հետո՝ 1899 թ. ապրիլի 22-ին, փոխադրվել քաղաքից մեկ ժամ

հեռավորության վրա գտնվող Ս. Լուսավորչի վանք: Ապաստանած որբերի սկզբնական թիվը 31 էր: Քանի որ այդ գավառի որբերի թիվը հասնում էր 1853-ի, որբանոցի հոգաբարձությունը, հույս կապելով վանքի հողերից ստանալիք հասույթի հետ, ակնկալում էր դրա հաշվին ավելացնել սաների թիվը: Պատրիարքը Ս. Շահազիզին էր ուղարկել Մոսկվայի հանձնախմբի հաշվին այդ որբանոցում պահվող 30 որբերի ցուցակը, որբանոցի հոգաբարձության անդամների անունները, նախնական ծախսերի հաշվեցույցն ու ելևմտացույցը (բյուջեն):

Ըստ նույն նամակի՝ Մերաստիայի որբանոցը բացվել է 1898 թ. նոյեմբերի 1-ին հատուկ հոգաբարձության ու հոգևոր առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոսի հովանու ներքո: Մոսկվայի մասնախմբի տրամադրած 50 օսմանյան լիքա նախապատրաստական գումարով ընդարձակվել էր որբանոցի շենքը, ինչը հնարավորություն էր տվել պատսպարելու 168 որբերի (5-15 տարեկան տղաներ ու 7-12 տարեկան աղջիկներ), որոնցից 40-ի հետագա չորս տարիների խնամքի ծախսերը հոգալու էր Մոսկվայի մասնախումբը: Պատրիարքը նամակով Ս. Շահազիզին էր փոխանցել որբանոցի հոգաբարձության անդամների ցուցակն ու հաշվեցույցը՝ հետագային թողնելով մասնախմբի հաշվին պահվող 40 որբերի ցուցակի ուղարկումը:

Նույն վավերագրից տեղեկանում ենք, որ Թորոսյան եղբայրների միջոցներով պահվող Ակնի որբանոցը բացվել է 1899 թ. մայիսի 23-ին հատուկ հոգաբարձության խնամքի ներքո: Պատսպարված որբերի թիվը 31 էր, որոնցից 25-ը պահվելու էին Թորոսյան եղբայրների հաշվին: Վերջիններիս անունից ուղարկված 25 լիքա (մոտ 100 ռուսական ոսկե ռուբլի) նախապատրաստական գումարով կատարելիք վերանորոգման աշխատանքներից հետո որբանոցը պետք է փոխադրվեր քաղաքին մոտ գտնվող Կոզմոս ու Դամիանոս անունով ուխտատեղի: Նամակով Ս. Շահազիզին էին ուղարկվում որբանոցի՝ Թորոսյան եղբայրների խնամքի տակ գտնվող որբերի և հոգաբարձության անդամների ցուցակները [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 118]:

Նման ծավալուն տեղեկատվությունից հետո պատրիարքը հորդորում էր Ս. Շահազիզին ու «Մոսկուայի բոլոր նպաստամատույց ազգայիններին» անվիատ շարունակել իրենց բարեգործական ձեռնարկը՝ վստահ լինելով, որ իրենց կամքը ճշտությամբ կգործադրվի, «... միայն թե եղած յանձնարարությունք բացորոշ ծանուցուին մեզ, և յետոյ՝ չ'ուզուի վաղվադիլ գործադրութեան մեջ, վասն զի այս հեռուոր արկածեալ գաւառներու մեջ՝ տեղական աննպաստ հանգամանաց պատճառաւ չեն կրնար որբանոցներն կազմակերպուիլ արագօրէն, բայց վերջապէս ապահովութեան ամեն պայմաններով կըհաստատուին և կասպնջականին լքեալ մանկտինք» [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 118]:

Պատրիարքի նամակի վերջին տողերից կարելի է եզրակացնել, որ Մոսկվայի մասնախմբի հետ հարաբերություններում լարվածության առաջացումը նա բացատրում էր երկու պատճառներով. նախ՝ իրեն տրված հանձնարարականների ոչ հստակությամբ, երկրորդ՝ Մոսկվայի հանձնախմբի Ս. Շահազիզի շտապողականությամբ, նրանց կողմից տեղական աննպաստ հանգամանքները հաշվի չառնելով: Մ. Օրմանյանի երկրորդ հարցադրման մեջ, անշուշտ, ճշմարտության բաժին կար: Ինչ վերաբերում է առաջինին, ապա 1898 թ. դեկտեմբեր-1899 թ. փետրվար ամիսների Ս. Շահազիզ-Մ. Օրմանյան նամակագրությունը պարզորոշ վկայում է, որ Մոսկվայի հանձնախմբի հանձնարարականներում անորոշություն չի եղել:

Սմբատ Շահազիզի որբախնամ գործունեության առաջին փուլը

Այնուհանդերձ, թյուրիմացությունները կարծես հարթված էին: Երեք գործող որբանոցների մասին ստացած տեղեկատվությունը ոգևորում էր այդ օրերին Յալթայում գտնվող գրողին: 1899 թ. օգոստոսի 6-ին ու օգոստոսի 18-ին գրված գրեթե նույնաբովանդակ նամակներով նախաչատուր Հովհաննիսյանին հանձնարարել է Ժամհարյանների դրամատանն իր անունով բացված հաշվից շտապ պատրիարքին փոխանցել ոչ միայն Մալաթիայի որբանոցի առաջին տարվա գումարի պակասորդն ու Ակնի որբանոցի տեղափոխման համար անհրաժեշտ նախապատրաստական գումարը, այլև մոսկվահայերի անունով բացվելիք Խիզանի (30 որբերի համար) և արմավիրցիների անունով բացվելիք Հաճնի (25 որբերի համար) որբանոցների առաջին տարվա համար անհրաժեշտ գումարները՝ համապատասխանաբար 1500 ու 1250 ռուբլու չափով[ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 11, վավ. 13]:

Կատարելով հանձնարարությունը՝ Խ. Հովհաննիսյանն 1899 թ. օգոստոսի 11-ի նամակով պատրիարքին է փոխանցել Ս. Շահազիզի հանձնարարականները և նույն նամակում ներփակյալ ուղարկել Ս. Օրմանյանի անունով մի չեկ՝ Օսմանյան դրամատնից համապատասխան գումարները ստանալու համար[ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին III, վավ. 60]:

Եզրակացություններ:

Ինչպես երևում է 1899 թ. օգոստոսի վերջին Ս. Շահազիզի գրած մեկ այլ նամակից գրողը, պատրիարքի հետ ունեցած խնդիրները կարգավորված համարելով, արդեն առաջնահերթ խնդիր էր համարում գործող երեք ու բացվելիք երկու որբանոցների երկրորդ տարվա ծախսերի համար հանգանակության կազմակերպումը [ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին II, վավ. 30]: Դա նշանակում էր, որ Մոսկվայի որբախնամ հանձնախմբի ու անձամբ Ս. Շահազիզի որբախնամ գործունեության առաջին փուլը կարելի էր ավարտված համարել: Մեկ տարուց մի փոքր ավելի ժամանակահատվածի համար դրա հանրագումարը շոշափելի էր՝ արդեն գործող երեք և մոտ ժամանակներում բացվելիք երկու որբանոցներ, որոնք ոչ միայն չորս տարի ժամկետով ապաստան էին տալու 150 որբերի՝ ապահովելով նրանց խնամքն ու կրթությունը, այլև կատարված նախապատրաստական ծախսերի շնորհիվ ի գործու էին լինելու ապաստան տալու նաև հարյուրավոր այլ որբերի: Այդ պահից Մոսկվայի հանձնախմբի ու նրա նախագահ Ս. Շահազիզի գործունեությունը թևակոխեց նոր փուլ, որտեղ արդեն ոչ միայն կարևորվելու էր գործող որբանոցների բնականոն գործունեության ապահովումը, այլև աշխատանք էր տարվելու նորերի բացման, որբերին որոշակի արհեստ սովորեցնելու և հրատապ այլ խնդիրների լուծման ուղղությամբ:

Գրականության ցանկ

Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի արխիվ (այսուհետ՝ ԳԱԹ), Պերճ Պոռշյանի ֆոնդ, վավ. 208, 214:

ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, բաժին I, վավ. 63, բաժին II, վավ. 4, 8, 9, 11, 13, 30, 39, 59ա, 104, 107, 108, 109, 110, 112, 114, 115, 116, 117, 118, բաժին III, վավ. 29, 30, 31, 32, 36, 47, 48, 60, 70, 71:

Բերբերեան Ռ., 1938, Պատրանքների շրջանից, // «ՎԷՄ» հանդես, N 3, էջ 46-49:

Գևորգյան Լ., 2009, Սմբատ Շահազիզի քնարերգությունը, Երևան:

Երեսունեւինգ տարի. 1862-1897, 1898, հրատարակութիւն Մ. Բարխուդարեանի, Մոսկուա:

Կուսիկեան Կ., 1912, Գրական դեմքեր, Մոսկուա:

Հովասափյան Հ., 1960, Սմբատ Շահազիզ, Երևան:

Մանուկյան Ա., 1959, Սմբատ Շահազիզ, Երևան:

Շահազիզ Ե., 1944, Սմբատ Շահազիզի կենսագրությունը, Երևան:

Միքայելյան Բ., 1900, «Դրօշակ», N 9, էջ 131: